2023-2024 ՈՒՍ. ՏԱՐԻ
ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Նախապատրաստվել և ներկայացնել Գիտելիքի օրվա միջոցառումը:
2. Հետևել, որ կահավորեն և պահպանվեն սանիտարահիգենիկ պայմանները դասասենյակներում:
3. Օգնել դասղեկներին և գրադարանավարին դասագրքերի բաշխման, փոխանակման աշխատանքները կատարելու ընթացքում:
4. Հրավիրել դասղեկների և դասվարների խորհրդակցություն: Հանձնարարել բոլոր դասղեկներին 08:40 լինեն դպրոցում: Աշակերտների բացակայության պատչառը ճշտել ծնողներից և տեղյակ պահել տնօրինությանը:
5. Օգնել դասղեկներին ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում, քննարկել և հաստատել նրանց աշխատանքային պլանները:
6. Ծանոթանալ առաջին դասարանցիների հետ: Դասվարի հետ միասին զրուցել աշակերտների ծնողների հետ, կազմել ծնողազուրկ, բազմազավակ, հաշմանդամ և սոցիալապես անապահով երեխաների անվանացանկ:
7. Վերահսկել հերթապահ ուսցիչների կողմից առավոտյան իրականացվող միջոցառումները՝ պատշաճ կերպով կազմակերպելու սովորողների մուտքը դպրոց:
8. Սիստեմատիկ կատարել հաճախումների հաշվառում, պարզել այս կամ այն պատճառով հսկողությունից դուրս մնացած աշակերտների հարցը, նրանց դպրոց չհաճախելու պատճառը: Ուշադրություն դարձնել աշակերտների արտահագուստին:
9. Անցկացնել աշակերտական խորհրդի ժողով, ձևավորել ընտրական հանձնախումբ: Հրավիրել աշակերտական խորհրդի նիստ, ընտրել դպրոցի աշակերտական խորհրդի նոր նախագահ: Աջակցել և ուղղորդել աշակերտական խորհրդի աշխատանքները:
10. Անցկացնել ծնողական ժողով, լսել ծնողխորհրդο և նախագահի կատարած աշխատանքների հաշվետվությունը: Անցկացնել ծնողխորհրդի նիստ, ընտրել ծնողխորհրդի նախագահ:
11. Հոգեբանի, ;ոգոպեդի, ուսումնական գծով փոխտնօրենի և ուսուցչի օգնականների հետ միասին բացահայտել կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող երեխաներին:
12. Ձեռնարկել միջոցներ սոցիալապես խիստ անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար (զեղչել դասագրքերի վարձավճարները, գտնել հովանավորներ): Ստուգել դասագրքերի տետրերի վիճակն ու առկայությունը (5-12-րդ դասարաններում):
13. Կրթության առանձնահատուկ պայմանների կարի ունեցող երեխաների համար ստեղծել հավասար պայմաններ: Տնօրինության հետ միասին օգնել և աջակցել նման երեխաներին:

14. Կազմել դժվար դաստիարակվող և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների անվանացանկ և նրանց հետ տարվող աշխատանքային պլան: Վերահսկել կարգապահական կանոնները:
15. Կազմել դժվար դաստիարակվող աշակերտի հետազոտման քարտ, հոգեբանի հետ իասին բացահայտել շեղված վարքագծի պատճառները, որպեսզի հիմք հանդիսանա հետագա կանխարգելիչ և շտկողական աշխատանքների համար:
16. Անհարկի բացակայությունները և ուշացումները բացառելու նպատակով սահմանել խիստ վերահսկողություն և հետևողականություն, աշխատանք տանել աշակերտների բարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ:
17. Մշտապես կապ պահպանել ՆԳ բաժնի անչափահասների տեսչության աշխատակիցների հետ: Ուշադրության կենտրոնում պահել դասերից փախչող, հաճախակի բացակայող և դժվար դաստիարակվող աշակերտներին: Կազմակերպել անհատական աշխատանքներ խնդրահարույց աշակերտների հետ:
18. Ամիսը մեկ անգամ անցկացնել դասղեկների խորհրդակցություն, քննարկել տվյալ ամսվա կատարված աշխատանքների արդյունքները, լսել դասղեկների հաշվետվությունը՝ աշակերտների հաճախումների և վարքի վերբերյալ, ներկայացնել հաջորդ ամսվա անելիքները:
19. Աջակցել շնողխորհրդի նախագահի ծնողխորհրդի նիստերը ժամանակին անցկացնելու համար:
20. Հաճախակի կազմակերպել տնային այցեություններ, զրուցել ծնողների հետ, հնարավորության դեպքում օգնել և աջակցել նրանց:
21. Անցկացնել Քաղպաշտպանության օրվան նվիրված միջոցառումներ: Տարհանում դպրոցական շենքից:
22. Կազամեկրպված անցկացնել ներդպրոցական և տարածքային օլիմպիադաները:
23. Աշակերտների հետ անցակացնել զրույցներ, բանավեճեր, սպորտային և առարկայական մրցույթներ: Նրանց մեջ ձևավորել հետաքրքրասիրություն ինտելեկտուալ խաղերի նկատմամբ:
24. Հաշվի առնելով աշակերտների առաջարկությունները, հնարավորությունները կազմակերպել և անցկացնել բազմաբնույթ միջոցառումներ սովորողների հանգիստը հետաքրքիր կազմակերպելու համար:
25. Շնորհալի երեխաներին բացահայտելու համար կազմակերպել և անցկացնել երգի, ասմունքի և պարի մրցույթներ: Լավագույն երեխաներին ընդգրկել համադպրոցական միջոցառումների ժամանակ:
26. Մասնակցել Անի համայնքում կազմակերպված միջոցառումներին:

2. ՌԱԶՄԱՀԱՅՐԵԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏՐԱԿԱՌԻԹՅՈՒՆ

1. Ռազմահայրենասիրական դաստիրակությունը բարձր հիմքերի վրա դնելու նպատակով անցկացնել միջոցառումներ, զրուցներ, հանդիպումներ, <<Մահ ոչ իմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն>> զրույց:

2. Տղաների մեջ ձևավորել հայրենիքին ավատարմորեն ծառայելու պատրաստակամություն: Կազմակերպել զրույցներ ազգային բանակի և նրա հերոս մարտիկների մասին: Գրել տալ ստողծագործական շարադրություն <<Մենք քիչ ենք, բայց հայ ենք>>, << Ես՝ ապագա զինվորս>>, <<Նամակ հայ զինվորին>> թեմաներով: Մեր երկրի մասին ունեցած գիտելիքների ընդարձակում՝ նվիրված Անկախության օրվան:
3. Ապրիլի 23-ին կազմակերպել երթ դեպի զոհերի հուշաքար, աշակերտների գիտակցության մեջ զոհերի հիշատակը վառ պահելու նպատակով: Ձևավորել պատի թերթեր <<Արյունոտ ապրիլ>> խորագրով:
4. Մայիսի 9-ին Հաղթանակի օրը մասնակցել համքաղաքային շքերթին: Կազմակերպել էքսկուրսիաներ, սովորողներին ծանոթացնելու մեր ժողովրդի հերոսական պատմությանը: Անցկացնել զրույց << Ճանաչեք ու սիրեք մեր հայրենիքը>> թեմայով: Հանձնարարել շարադրության մրցույթ << Հայրենիք, մեր օրրան>>:

3. ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ամուր հիմքերի վրա դնել աշակերտների հոգևոր դաստիարակությունը: Զրույցների միջոցով նրանց գիտակցությանը հասցնել կրոնական աղանդների հակաքրիստոնեական, համամարդկային լինելը: Սովորողներին հեռու պահել աղանդավորական շարժումներից:
2. Աշակերտներին իրազեկ դարձնել ազգային եկեղեցական տոներին: Նշել կրոնի դրը, ժողովրդի կյանքում: Դպրոց հրավիրել քահանային: Կազմակերպել զրույց <<Աստվածաշունչը և մենք>> թեմայով:
3. Կազմակերպել բաց դասեր, դասալսումներ ՀԵՊ առարկայից: Եկեղեցական տոներին այցելել եկեղեցի պատարագ ունկնդրելու: Հանձնարարել կարդալ <<Մանկական աստվածաշունչը>> և քննարկել:
4. Կազմակերպել էքսկուրսիա դեպի Էջմիածին, Խոր-Վիարպ, Տաթևի վանք: Երեխաների մեջ դաստիարակել հավատ, ազնվություն, գթառատություն, արդարամտություն և բարություն: Զրույց <<Մեկ ազգ, մեկ կրոն>>:
5. Նպաստել սովորողների կրոնական դաստիարակությանը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքները քրիստոնեական տոների վերաբերյալ՝ <<Ծաղկազարդ>>, <<Քրիստոսի ծնունդ>>, <<Զատիկ>>, <<Սուրբխաչ>> և այլն:

4. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Սովորողների մեջ ձևավորեկ էստետիկական ճաշակ: Սովորեցնել հասկանալ գեղեցիկը, գնահատել և ճանաչել: Ձևավորել պատի թերթեր, հանձնարարել գրել ստեղծագործություններ, զարգացնել սովորողների ստեղծագործական կարողությունները:

2. Կազմակերպել մրցույթ Ամանորյա տոնածառի լավագույն խաղալիքի պատրաստման և դասասենյակի ձևավորման: Խրախուսել սովորողների ձեռքի աշխատանքը, հայտնագործել հմուտ ձեռքեր ունեցողներին, շնորհալիներին:
3. Անցկացնել զրույցներ և քննարկումներ հետևյալ թեմաներով <<Գեղեցիկը իմ պատկերացմամբ>>, << Երաժշտությունը մեր կյանքում>>, <<Աշխատանքով է մարդը գեղեցիկ>>: Անցկացնել ասմունքի և երգի մրցույթ: Սովորողների մեջ ձևավորել հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ:
4. Կազմակերպել զրույցներ սիրած արվեստագետի, հաղորդաշարի մասին, արտահայտել կարծիքներ դիտած հաղորդաշարի մասին:
5. Կազմակերպել և ացնկացնել ցերեկույթ՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին: Ձևավորել դասարանական պատի թերթեր, դպրոցի միջանցքներում ստեղծել վահանակներ: Անցկացնել գրքի քննարկումներ: Անցկացնել ծաղիկների փառատոն <<Ծաղիկները բնության զարդն են>>:

5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կազամակերպել սովորողների առողջության ամրապնդմանը, ֆիզիկական ու ածխատանքային դաստիարակությանը նպաստող միջոցառումներ, զրույցներ <<Ածխատանքի ո՞ր տեսակն եք նախընտրում>>, <<Մարդը գեղեցիկ է գործով>>, <<Իմ պարտականությունը մեր տանը>> թեմաներով:
2. Դաստիարակել ածակերտների մեջ աշխատասիրություն, նրանց գիտակցությանը հասցնել ծնողների հանդեպ ունեցած իրենց պարտականությունները, ձևավորել նրանց օգնելու պատրաստակամություն: Անցկացնել զրույց <<Ածխատանքը մայրն է ամեն բարիքի>>, <<Մաքուր պահենք մեր դպրոցի բակը>> թեմաներով:
3. Սովորողներին ներգրավել դպրոցական և քաղաքային շաբաթօրյակներին: Սահմանել աշակերտական հերթապահություն դասասենյաներում և միջանցքներում, հետևել, որ աշակերտները բարեխղճորեն կատարեն հերթապահությունը:
4. Հետևել, որ աշակերտները վերանորոգեն պատռված դասագրքերը: Սովորողներին ներգրավել դպրոցի բակի բարեկարգման և մաքրման աշխատանքներին: Նրանց մեջ բարմատավորել <<Արա ուրիշի համար, սովորիր քեզ համար>> սկզբունքը: Կյանքից քաղած օրինակների հիման վրա սովորողների գիտակցությանը հասցնել աշխատանքի կարևորությունն ու նշանակությունը:
5. Կազմակերպել բաց դաս տեխնոլոգիա առարկայից: Վերաբերմունք դեպի աշխատանքը <<Ինչպե՞ս են անցկացնում ազատ ժամանակը>>:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Սովորողների մեջ սերմանել աշխատասիրություն, սեր հայրենի բնության և հոգածություն կանաչ տարածքների հանդեպ: Զրույց-բանավեճ <<երկրագունդը բոլորիս տունն է>> թեմայով:

2. Սովորողներին զինել բնության և հասարակության մասին այն անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, որ մարդկությունը կատարել է դարերի ընթացքում: Բացատրել շրջապատող բնության էկոլոգիապես մաքուր լինելու օգտակարությունն ու անհրաժեշտությունը:
3. Հետևել դպրոցի բակի մաքրման և ծառատնկման աշխատանքներին: Անցկացնել հարցում. <<Ինչպես վարվել աղբի հետ>>:
4. Մասնակցել համաքաղաքային շաբաթօրյակին:

7. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Սովորողներին ներգրավել սպորտ խմբակներում , մասնակից դարձնել ներդպրոցական սպորտային միջոցառումներին, ծանոթացնել հայ մարզիկների հաջողություններին, աշխարհի առաջնություններում նրանց ձեռքբերումներին:
2. Կազմակերպել զրույց <<Իմ սիրած մարզաձևը>> թեմայով: Նպաստել սովորողների ֆիզիկական դաստիարակությանը: Սովորողների գիտակցությանը հասցնել ամենօրյա մարզանքի կարևորությունն առողջության համար: Առողջ ապրելակերպի վերաբերյալ զրույց բժշկի հետ: Զրույց <<Իմ վերաբերմունքը իմ առողջությանը>> թեմայով:
3. Անցկացնել դասալսումներ ֆիզկուլտուրայից, օգնել և խրախուսել ուսուցիչներին դասերն ավելի հետաքրքիր և աղյունավետ դարձնելու:
4. Հաճախակի կազմակերպել սպորտային ներդպրոցական միջոցառումներ: Անցկացնել շախմատի ներդպրոցական մրցույթ:

8. ՍԵՌԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բարձր և միջին դասարանների աշակերտների հետ անցկացնել զրույցներ հետևյալ թեմաներով. <<Սեռական հասունացում>>, <<Թմրամոլությունը և վարակները>>, <<Սեռական բռնությունը հանցանք է >>:
2. Թրաֆիքինգի վտանգը, դիտել տեսաֆիլմեր <<Թրաֆիքինգի զոհերը>> որոնք վերաբերվում են սեռական և իրավական դաստիարակությանը:
3. Ձևավորել ամենօրյա ուշադրություն և հետևողականություն անձնական հիգիենայի նկատմամբ:
4. Անցկացնել զրույց <<Սեռական հասունացման շրջանում օրգանիզմում տեղի ունեցող փոփոխությունները>> թեմայով:

9. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կարողանալ <<ՈՉ>> ասել վտանգավոր առաջարկներին (թմրամիջոցներ, ծխախոտ, ալկոհոլ,) թեմաներով աշակերտների և ծնողների հետ անցկացնել զրույցներ: Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում:

2. Մշտապես կապ պահպանել ՆԳ բաժնի անչափահասների գծով զբաղվող մանկական տեսուչների և աշխատակիցների հետ, դժվար երեխաների դաստիարակության խնդիրները ժամանակին լուծելու համար: <<Երեխայի իրավունքներ>> հոչակագրի ուսումնասիրում:
3. Անցկացնել զրույցներ և միջոցառում <<Խույս տալ չարությունից և բարին արա>>, դպրոցում աշակերտների <<Վարքի և վարվելակերպի ձևավորմանը և զարգացմանը օժանդակելու մասին>> զրույցներ:
4. Բարձր դասարաններում ՆԳ բաժնի աշխատակիցների հետ անցկացնել զրույց <<Ինչպես կանխել և վերացնել իրավախախտումները>> թեմայով: Սովորողների մեջ ձևավորել օրինակելի վարքագիծ: <<Օրենքի պաշտպանն իմ բանաձևում>> թեմայով բանավեճ:

10. ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ՝ ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

1. Շարունակել սերտ կապն ու համագործակցությունը ծնողների ու դասավանդող ուսուցիչների հետ, հետևել դեռահասների սեռական դաստիարակությանը, բնավորության առանձնահատկությունների մշակմանը: Ծնողխորհրդի անդամների հետ հետևել տղաների վարքին ու առաջադիմությանը: Անցկացնել բանավեճ <<Արդյո՞ք միշտ են ծնողները ճիշտ>> և <<Շրջապատի վատ ազդեցությունը երեխայի վրա>> թեմաներով:
2. Ապահովել սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնությունը դաստիարակության հարցերում: Զրույց <<Ինչպե՞ս պայքարել ծուլության և անտարբերության դեմ>> թեմաներով:
3. Ծնողներին ներգրավել աշակերտներ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներում (շաբաթօրյակ, տոնական միջոցառումներ): Աջակցել դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ ներգրավելով հովանավորներին:
4. Ապահովել երեխաների իրավունքների պաշտպանությունը՝ համագործակցելով աշակերտական խորհրդի հետ: Աջակցել աշակերտների հանգստի կազմակերպմանը:
5. Կազմակերպել սեմինարներ ծնողներին կրթական բարեփոխումների, երեխաների իրավունքների պաշտպանության և այլնի մասին: Անցկացնել ծնողական ընդհանուր ժողով, քննարկել դաստիարակչական հարցեր:
6. Ծնողխորհրդի անդամների հետ այցելել հաճախակի բացակայող և դասերից մշտապես ուշացող երեխաների տները, զրուցել ծնողների հետ, համագործակցային աշխատանքների միջոցով կանխել դրանք:

11. ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՍՂԵԿՆԵՐԻՆ

1. Օգնել երիտասարդ դասղեկներին հայտնաբերել աշակերտների ցածր առաջադիմության պատճառները և վերացնել բացթողումները: Կատարել

դասղեկի ժամերի դասալսումներ, օգնել նրանց, որպեսզի այդ ժամերն անցնեն հետաքրքիր և արդյունավետ:

2. Դասղեկների հետ միասին մասնակցել ծնողական ժողովներին, միջոցառումներին, օրինակելի դասղեկի ժամերին:
3. Դասղեկների հետ միասին կազմակերպել էքսկուրսիաներ, արշավներ, կինոֆիլմերի դիտում: Օգնել դաստիարակչական աշխատանքները պլանավորելիս ծնողների հետ համագործակցելիս:
4. Խնդիրներ ունեցող երեխաների դաստիարակության հարցում օգնել դասղեկներին, նրանց հետ միասին այցելել նման երեխաների տները, զրուցել ծնողների հետ, ծանոթանալ ընտանեկան պայմաններին: